



ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի պրոֆեսոր,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր

ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ*

Հիմնաբառեր. *Բառագործածություն, բառապաշար, հավելադրություն,
կրկնաբանություն, օտարաբանություն*

*Ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ծև մի մեծ
ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհը:
(Հովհ. Թումանյան)*

Բառագործածությունը գիտական խոսքում

Գիտական հրապարակումը՝ լինի ամսագրային հոդված թե մենագրություն, հետազոտության մասին հաշվետվություն թե ատենախոսական աշխատանք, ամփոփում է հեղինակի հարցադրումները, դատողությունները, եզրակացությունները, առաջարկությունները: Առարկայական հրատարակման կամ համացանցային նյութի ծևով՝ հեղինակի մտքերը գոյություն ունեն ինքնին՝ «իրենց համար», և միայն ընթերցողի հետ հաղորդակցումն է դրանք դարձնում նաև «այլոց համար»: «Խոսույթը» (դիսկուրս) լեզվական այն իրողությունն է, որ կամրջում է կողմերին: Իհարկե, ամեն մի հեղինակ միտքն ուղղում է որոշակի հասցեատերերի, բայց այլևս ինքը չի որոշում համդիպման ո՛չ ժամանակը, ո՛չ էլ պայմանները: Բազում օրինակներ կարելի է հիշատա-

* Հոդվածը պատրաստվել է «Ժամանակակից տնտեսագիտական խոսույթի լեզվատրամաբանական վերլուծություն» ՀՊՏՀ գիտական դրամաշնորհի շրջանակներում:

կել, թե ինչպես միևնույն գիրքը տարբեր ժամանակներում ամենատարբեր, անգամ արմատապես հակադիր ընդունելության է արժանացել: Որևէ հեղինակի կարծիքը չընդունելու պատճառները, անշուշտ, շատ-շատ են՝ աշխարհայացքայինից մինչև նյութի լեզվական մատուցման մակարդակը: Այլ կերպ ասած՝ մի ծայրահեղությունն այն է, որ մենք չենք ընդունում այս կամ այն հեղինակին, քանի որ գաղափարապես (աշխարհայացքով, դավանանքով, դիրքորոշմամբ) անհամատեղելի ենք, մյուսն այն է, որ պարզապես ի վիճակի չենք լինում ըմբռնելու խոսույթը: Այս վերջինին առնչվող խորքային մի իրողություն կա, որ բազում թյուրիմացությունների պատճառ է դառնում՝ հարուցելով մարդկանց արդյունավետ փոխըմբռնման անհամար խոչընդոտներ, ընդ որում՝ ոչ միայն գիտական, այլև հաղորդակցման մյուս բոլոր տեսակներում: Բանն այն է, որ թեպետ մենք ծագում ենք միմյանց հաղորդել որոշակի միտք՝ մեր դատողությունը (ցանկությունը, պահանջը, երախտագիտությունը, հրամանը, վերաբերմունքը, գոհունակությունը, գայրույթը, նորությունը, հարցը և այլն), բայց, փաստորեն, հաղորդակցման ընթացքում տեղի է ունենում ոչ թե «միտք» – «միտք» ուղղակի անցում (հեղինակի մտքի անմիջական հաղորդում հասցեատիրոջը), այլ դրա միջնորդավորում լեզվական որոշ միջոցների գործադրմամբ, այսինքն՝ «միտք» – «խոսք» – «միտք» անցում¹: Այլ կերպ ասած՝ հեղինակի միտքը նախապես վերածվում է լեզվական իրողության՝ որոշակի խոսքաշարի, որի համարժեք ընկալման և վերծանման պայմանով միայն հասցեատերն ունակ է լինում լիարժեքորեն հասկանալու ելակետային միտքը: Ահա խոսքի այս միջնորդավորող դերի անտեսումը (տարբեր պատճառներով՝ թերի իմացության, շտապողականության և այլն) «պատժում է» հեղինակին, բարդացնում նրա մտքի հնարավորինս հստակ ձևակերպումը և ստույգ հասցեագրումը: Ասվածն ամենից առաջ վերաբերում է բառերի գործածությանը, այն «աղյուսներին», որոնցով կառուցում ենք մեր խոսքը, իրականացնում խոսքային հաղորդակցումը:

Իրոք, խոսքային հաղորդակցման ամեն մի տեսակի հիմքը բառագործածությունն է՝ գիտական խոսք լինի, թե առտնին, գեղարվեստական, թե պաշտոնական: Մեր ասելիքը ստույգ ձևակերպելու և հասցեատիրոջը հնարավորինս համարժեք հաղորդելու համար ընտրում ենք համապատասխան բառեր, հյուսում ենք, ագուցում մեկմեկու, կառուցում որոշակի «տեքստ» («textum» բառը լատիներեն է, նշանակում է «հյուսվածք»): Բառերը, իհարկե, տարբեր են՝ ըստ խոսքի տեսակի, նպատակի, հասցեատիրոջ առանձնահատկությունների և բազում այլ հանգամանքների, բայց դրանք պետք է ներդաշնակ հյուսենք, ենթարկվենք բառագործածության գլխավոր հրամայականին՝ «Ճիշտ բառը՝ ճիշտ տեղում»: Ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում մեկ անհաջող, ոչ իր տեղում գտնվող, հեղինակի մտադրությանը հակառակ, ոչ հարկավոր պատշաճությամբ գրառված կամ արտասանված բառն իսկ կարող է կործանարար լինել: Տակավին երկու հազար տարի առաջ է ասվել՝ «անհմուտ, հենց այնպես նետված բառն իր հետ միասին սպանում է նաև օգտակար միտքը»²: Ուստի՝ հեղինակի խնդիրն է զգուշանալ անպատեհ ու անպատշաճ բառերից, որքան էլ տալավորիչ ու ազդեցիկ թվան:

¹ Տե՛ս հանգամանորեն **F. de Saussure**, Cours de linguistique general. Paris, „Payot & Rivages“, 1995: Ուսերեն թարգմանությունը՝ **Փ. де Соссюр**, Курс общей лингвистики. М., „Логос“, 1998:

² **Галикарнасский Д.**, О соединении слов // Античные риторика / под. ред. Тахо-Годи А., М., 1978, с. 169.

Ինքնին հասկանալի է, որ բառընտրությանն ու բառագործածությանը ներկայացվող պահանջները միևնույնը չեն խոսքի տարբեր տեսակների համար: Հիշեցնենք, որ գիտական հրապարակման լեզվական շարադրանքին ներկայացվող հիմնական պահանջներն են՝ հստակություն, պարզություն, հակիրճություն, համարժեք եզրաբանություն, ոճական պատշաճություն, բխեցումների հետևողականություն, եզրակացությունների հիմնավորվածություն, խոսույթի հնարավոր հասցեատերերի առանձնահատկությունների բավարար հաշվառում, մատուցման մատչելիություն³: Արդեն անդրադարձել ենք նաև գիտական լեզվի կարևոր առանձնահատկություններից մեկին՝ եզրաբանության գործածությանը՝ հատկապես հասկացությունների սահմանումներին, դրանց տեսակներին, եղանակներին, հաճախադեպ լեզվատրամաբանական սխալների վերլուծությանը⁴: Ստորև դիտարկենք արդի գիտական խոսքում բառագործածության որոշ առանձնահատկություններ՝ որպես հետազոտական նյութ օգտագործելով առավելապես տնտեսագիտական հրապարակումները:

Ճիշտ բառը՝ ճիշտ տեղում

❖ «Այս տեսակետից, հայաստանյան ձեռնարկությունների *ինովացիոն* ակտիվությունը գտնվում է շատ ցածր մակարդակում: Դրա պատճառներից մեկը *ոչ մրցունակ* միջավայրն է»:

Բառիմաստի ակնհայտ խաթարում է տեղի ունեցել. «մրցունակությունը» ապրանքի (կազմակերպության, անձի, գաղափարի և այլն) կարողությունն է՝ մրցելու այլ ապրանքների հետ, բնականաբար, որոշակի հատկանիշների համեմատությամբ, ամենից առաջ՝ որակի և գնի: Իսկ «մրցակցությունը» հենց այդ համեմատության հնարավորությունն է, մի վիճակ, երբ շուկայի մասնակիցների թիվն այնքան մեծ է, որ նրանցից ոչ մեկի վարքը չի կարող ազդել գնի մակարդակի վրա⁵: Արդ, միջավայրը կարող է ապահովել նման հնարավորություն, այսինքն՝ լինել «մրցակցային» կամ էլ չապահովել (մենաշնորհի կամ այլ հանգամանքների պատճառով):

Ուստի կարող ենք առաջարկել շտկման (այսինքն՝ հեղինակի մտքի իմաստի վերականգնման) մի տարբերակ՝ «Այս տեսակետից, հայաստանյան ձեռնարկությունների նորաստեղծական ակտիվությունը շատ ցածր մակարդակի է: Դրա պատճառներից մեկը *ոչ մրցակցային* միջավայրն է»:

❖ «Եթե տրանսպորտային ծախսերը բարձր են, ապրանքի գնային *մրցակցությունը* համաշխարհային շուկայում ընկնում է, քանի որ ապրանքի վաճառքի գինը բարձրանում է»:

Նախորդ բացատրության լույսով՝ բառիմաստը նույնպես խաթարվել է, այս անգամ «մրցունակության» փոխարեն «մրցակցությունն» է գործածվել: Ապրանքը «մրցունակ» («ոչ մրցունակ») է լինում իր հատկությամբ, տվյալ դեպքում՝ գնով: Հետևաբար՝ «ապրանքի գնային *մրցունակությունը* համաշխարհային շուկայում ընկնում է....»:

³ Տե՛ս հանգամանորեն Վ. Միրզոյան, Գիտական հրապարակումների լեզվական ձևակերպման մի քանի հարց // «Բանբեր ՀՊՏՀ», 2013, № 1, էջ 118–135:

⁴ Տե՛ս հանգամանորեն Վ. Միրզոյան, Գիտական աշխատանքի լեզվատրամաբանական մատուցումը // «Բանբեր ՀՊՏՀ», 2013, № 2, էջ 134–150:

⁵ Գ. Կիրակոսյան, Հ. Ղուլչյան, Ի. Տիգրանյան, Տնտեսագիտական բացատրական բառարան, Եր., «Տնտեսագետ», 1999, էջ 282:

❖ «Արժեքը շատ լայն և վերացական **հասկացողություն** է: Այն *իր մեջ* ներառում է ինչպես ավանդական գնային և ապրանքային քաղաքականությունները, այնպես էլ դիրքավորման և հաղորդակցության ռազմավարությունները, բրենդի ստեղծումը, իմիջի մշակումը և այլն»:

«Հասկացությունը» և «հասկացողությունը» թեպետ իրենց զուտ բառարանային նշանակության մի նեղ տիրույթում համընկնում են, սակայն, հատկապես գիտական շրջանառության մեջ էապես տարբեր իմաստներ ունեն: Առաջին բառով նշում ենք որոշակի երևույթի, հատկության, գաղափարի (մարդ, տնտեսություն, մրցակցություն, արժեք, համբերություն, ժողովրդավարություն և այլն) ընդհանրացված ըմբռնումը: «Հասկացությամբ» ամրագրված որոշակի իմաստը մարդկանց հաղորդակցման տրամաբանական հենքն է ապահովում՝ սկսած ամենագործածական բառերից (հաց, ջուր, տուն, խոսք, առավոտ, բարև և այլն), վերջացրած ամենախրթին գիտական եզրաբանությամբ: Իսկ «հասկացողությունը» (ինքնին՝ որպես «հասկացություն») նշում է այս կամ այն հասկացության անձնային ընկալման և ըմբռնման չափը: Այլ կերպ ասած՝ «հասկացությունը» վերանձնային է, վերսուբյեկտային, իսկ «հասկացողությունը»՝ սուբյեկտային: Այնպես որ՝ ընթերցողը թող որպես անմիտ բառախաղ չընկալի, այսպես կոչված, պահային ասույթը. ««Հասկացողությունը»՝ որպես «հասկացություն», բնութագրում է «հասկացությունը» հասկանալու սուբյեկտիվ կողմը»:

Ասվածը մեզ հիմք է տալիս առաջարկելու շտկման հետևյալ տարբերակը (դյուրին հասկանալի որոշակի ոճական փոփոխություններով)՝ «Արժեքը շատ լայն և վերացական **հասկացություն** է. ներառում է ինչպես ավանդական գնային և ապրանքային քաղաքականությունը, այնպես էլ դիրքավորման և հաղորդակցության ռազմավարությունը, բրենդի (ապրանքանիշ) ստեղծումը, կերպարի (իմիջ) ձևավորումը և այլն»:

❖ «Հասարակության ներսում տեղի ունեցող ձևախեղումների **արդյունքում** օբյեկտը և սուբյեկտը կարող են տեղերը փոխել, ինչպես կփորձենք ցույց տալ ստորև»: «Արդյունավետ չի օգտագործվել տնտեսական ներուժը, որի **արդյունքում** մի շարք ոլորտներում արձանագրվել են կորուստներ»: «Անհրաժեշտ է մեծացնել ավտոտրանսպորտային պատահարների **արդյունքում** առաջացած ինչպես անձնական, այնպես էլ գույքային վնասների դիմաց փոխհատուցման առավելագույն սահմանաչափերը»:

Բոլոր մեջբերումներում էլ գերադասելի էր «**հետևանք**» բառի գործածությունը, քանի որ «արդյունքը» առնչվում է դրական, արգասաբեր իրողությանը:

❖ «Սակայն հետագա տարիներին, հատկապես 2000-ական թթ. օրենսդրական բարեփոխումների **հետևանքով** Հայաստանում սկսեց ձևավորվել ապահովագրական շուկան»:

Այստեղ էլ հակառակն է կատարվել: Առհասարակ, «բարեփոխումների հետևանք» բառակապակցությունն ինքնին ներքնապես հակասական է: Սա կարող էր արդարացված լինել, եթե միտումնավոր կերպով գործածվեր որպես ոճական հնարքի տեսակ՝ դարձույթ՝ «նրբաբանություն» (օքսիմորոն). այսկերպ հեղինակը կցանկանար ակնարկել, թե բարեփոխումներն իրականում միայն վնաս են տվել: Մեջբերված նախադասության մեջ հակառակ իրողությունն է հաստատվում, ուստի տեղին էր՝ «բարեփոխումների **արդյունքում**» կամ էլ «բարեփոխումների **շնորհիվ**»:

❖ «Քաղաքական արտադրանքի *տակ* հասկացվում է *ցանկացած* քաղաքական գործունեություն, որը փոխանակության մի մասնակիցը կարող է առաջարկել մյուսին»:

Սա ակնհայտ ռուսաբանություն է: Հայերեն կարող ենք շարադրել հետևյալ կերպ. «Քաղաքական արտադրանք ասելով հասկացվում է ամեն մի քաղաքական գործունեություն, որը փոխանակության մի մասնակիցը կարող է առաջարկել մյուսին»: Ավելին՝ քանի որ սահմանում է տրվում, գերադասելի էր որպես հասկացություն մեկնաբանել՝ ««Քաղաքական արտադրանքը» քաղաքական գործունեության այն տեսակն է, որը փոխանակության մի մասնակիցը կարող է առաջարկել մյուսին»:

❖ «Ռուսաստանի Դաշնությունում խոշոր քաղաքների կատեգորիային են դասվում 500 հազարից *ավել* բնակիչ ունեցող քաղաքները, իսկ առանձնահատուկ խումբ են *կազմում* 1 միլիոնից *ավել* բնակիչ ունեցող մեգապոլիսները»: «....Մեկ և *ավել* պատասխաններ»: «....Մեկ տարի կամ *ավել* ժամանակահատված է»: «....Աշխատավարձի մակարդակների նկատմամբ *ավել* են եղել՝ համապատասխանաբար....»:

Շատ տարածված սխալ է. հեղինակները նկատի են ունեցել առավելության հանգամանքը, այն է՝ մի քաղաքը մյուսից *ավելի* շատ բնակիչ ունի, պատասխանները մեկից *ավելի են*, ժամանակահատվածը մեկ տարուց *ավելի է*: Այսինքն՝ «ավելի» բառը մակբայ է (նշում է գոյության կերպը), մինչդեռ մեջբերումներում եղած «ավել» բառը գոյական է, նշանակում է «ծառերի ճյուղերից կամ բույսերի ցողուններից կապած փոքրիկ խրձիկ՝ հատակը, փողոցները մաքրելու համար»⁶:

❖ «Պաշտոնական շատ աղբյուրներ չեն *հերքում* հանրապետությունում հարկային բեռի ծանր լինելու հանգամանքը, որը *հանդիսանում է* ձեռնարկատիրության ընդլայնմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը *խոչընդոտող գործոն*»:

«Հերքում», «ժխտում», «մերժում» բայերը տարբեր իրողություններ են արտահայտում⁷. Ժխտում ենք փաստը, դեպքը, հերքում՝ կարծիքը, տեսակետը, մերժում առաջարկը, խնդրանքը: Այնպես որ, տվյալ դեպքում «ժխտման» մասին է խոսքը: Ի լրումն, մեզ վիճահարույց է թվում «բարելավմանը խոչընդոտող գործոն» արտահայտությունը: Ջուտ բառարանային նշանակությամբ՝ «գործոն» այն երևույթն է, որը պայմանավորում է որոշակի գործի, գործողության ընթացքը⁸, և վերջին տարիների բառագործածությունը, կարծեք, ավելի է շեշտադրում «գործոն» հասկացության իմաստի առավելապես դրական նշանակությունը. համեմայնդեպս, ավելի հաճախադեպ են «բարենպաստ գործոն», «նպաստավոր գործոն», «գործոնի շնորհիվ» և նման բառակապակցությունները, քան բացասական գույզորդումը:

Արդ, հեղինակի մտքի վերածնակերպման տարբերակն է՝ «Պաշտոնական շատ աղբյուրներ չեն *ժխտում* հանրապետությունում հարկային բեռի ծանր լինելու հանգամանքը, որը ձեռնարկատիրության ընդլայնման և ներդրումային միջավայրի բարելավման» **խոչընդոտ է**:

⁶ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան», 1976, էջ 119:

⁷ Տե՛ս հանգամանորեն Վ. Միրզոյան, Հայերենը՝ անադարտ (լեզվասխալների վերլուծություն), Երրորդ, լրաց. հրատ., Եր., «ՎՄՎ-Պրինտ», 2013, էջ 108–110:

⁸ Տե՛ս Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 258:

❖ «Նա **դուրս է գալիս** հումքի, էներգիայի, աշխատանքային ռեսուրսների շուկաներ, որպեսզի գնի իրեն անհրաժեշտ այդ գործոններից.... Կարող է ընդլայնել իր հնարավորությունները, այսինքն՝ կրկին **դուրս գալ** հումքի, էներգիայի, աշխատուժի շուկաներ լրացուցիչ ռեսուրսներ գնելու նպատակով»:

Հայերեն լեզվամտածողությամբ՝ տնտեսավարող սուբյեկտը **մտնում է** շուկա: Այլ բան է՝ որ ապրանքը, ծառայությունների **հանում են** շուկա, **դուրս են գալիս** միջազգային ասպարեզ, բայց, միևնույն է, **մտնում են** համաշխարհային շուկա, **մտնում են** շուկայական հարաբերությունների մեջ: «Выйти на рынок» լեզվակաղապարը ռուսերենին է բնորոշ:

❖ «Վերջին տարիներին ՀՀ-ում, ինչպես և **նախկին հետխորհրդային բոլոր** հանրապետություններում, ակտիվ կերպով զարգանում է ոչ պետական մասնագիտական կրթության համակարգը»:

«Նախկին» և «հետխորհրդային» բառերը կողք կողքի դրվելու և որպես մեկ բառակապակցություն օգտագործվելու «իրավունք» չունեն. հայ դասական ճարտասանության մեջ այդ խնդիրը վաղուց է լուսաբանվել: «Հարազատութիւն ընդ իմաստաբանութեան». սա է բառերի առդրության պահանջն ըստ Միքայել Սալլանթյանցի⁹: Իսկ Սամվել Գանթարյանն այսպես է ձևակերպել բառերի հնարավոր կապակցելիության կանոնը. «Եթէ երկու իմաստք զիրար պիտի բացայայտեն, պէտք է զանոնք միացնել, իսկ եթէ զիրար պիտի չբացայայտեն, պէտք է զատել զանոնք»¹⁰:

Ինքնին հասկանալի է, որ այստեղ հարկավոր էր գրել կամ «**հետխորհրդային** մյուս հանրապետություններում», կամ «**նախկին խորհրդային** մյուս հանրապետություններում»:

Սա կարող էր վրիպակ համարվել, մինչդեռ բավական հաճախ է հանդիպում գիտական և հրապարակախոսական հրապարակումներում:

Իսկ «բոլոր» ածականի փոխարեն «մյուս»-ի գործածությունը (հուսով եմ՝ ընթերցողը դա նկատեց) պարտադիր է, քանի որ, հեղինակային ձևակերպմամբ, Հայաստանը պարզապես... դուրս է մնացել «բոլոր հանրապետությունների» շարքից:

Անհարկի հոգնակի

❖ «Փորձենք ընդհանրացնել **գրականություններում** հանդիպող իմիջի տարբեր դասակարգումները»:

«Գրականություն» բառը հարկավոր էր եզակի թվով գործածել, քանի որ արտահայտում է հավաքականություն: Տվյալ դեպքում այդ բառով նշվում է համապատասխան բնագավառում հրատարակված գրքերի ամբողջությունը: «Իմիջ» (կերպար) բառն էլ պետք է առնվի չակերտների մեջ, քանի որ վերաբերում է հասկացության անվանմանը:

Շտկման տարբերակը՝ «Փորձենք ընդհանրացնել «կերպարի» (իմիջ)՝ գրականության մեջ հանդիպող տարբեր դասակարգումները»:

⁹ Տե՛ս Մ. Սալլանթեանց, Հրահանգ ճարտասանութեան կամ ճառաբանութեան, Մոսկով, 1836, էջ 300:

¹⁰ Ս. Գանթարեան, Տարեք հռետորական արուեստի, Վենետիկ, 1875, էջ 166:

❖ «Արտերկրների» հետ Հայաստանի արտաքին գործառնությունների՝ նախորդ տարիներին դրսևորված միտումները 2008 թ. հետո որոշակի փոփոխությունների են ենթարկվել:

Այս դեպքում ևս պահանջվում է եզակի թվով գործածություն. «արտերկր-րը» Հայաստանից դուրս՝ արտաքին աշխարհը, բոլոր երկրները միանգամից բնութագրող բառ է: Ուրեմն և՛ «Արտերկրի» հետ Հայաստանի արտաքին....»:

❖ «Դեպի արտաքին աշխարհի Հայաստանի հիմնական **դարպասները** *հանդիսանում* է Վրաստանը»:

«Դարպաս» բառի հոգնակի ձևը այստեղ ռուսաբանության արտահայ-տություն է. ռուսերենում «ворота»-ն անեզական գոյական է, կապակցվում է միայն հոգնակի ձև ունեցող բառերի հետ, նույնիսկ եթե եզակի իրողություն է արտահայտում. ռուսերեն կասվեր՝ «Грузия является *основными* воротами для выхода Армении во внешний мир»:

Առաջարկվող շտկումը՝ «Դեպի արտաքին աշխարհի Հայաստանի հիմնա-կան **դարպասը** Վրաստանն է»:

Բառապաշարի աղքատությունը

❖ «Որքան **մեծ** է հիմնական արտադրական կապիտալի ծավալը հասա-րակության տրամադրության տակ և որքան **մեծ** է նրա արտադրողականու-թյունը, այնքան **մեծ** է արտադրության ծավալները **մեծացնելու** հնարավորու-թյունները»:

Աշխատենք խուսափել «մեծ» ածականի այսօրինակ կուտակումից. «Որ-քան **մեծ** են հասարակության տրամադրության տակ հիմնական արտադրա-կան կապիտալի ծավալը և արտադրողականությունը, այնքան **մեծ** են ար-տադրության ծավալներն **ընդլայնելու** հնարավորությունները»:

❖ «Մինչ վերջերս, իրականացված ծրագրերում գործարարության զար-գացմանն ուղղված բաղադրիչները որպես կանոն փոքրածավալ և սակա-վաթիվ են եղել: Նման ուղղվածություն **ունեցող** և նշանակալի չափեր **ունեցող** ծրագրերի թվում են, մասնավորապես....»:

Ոչ միտումնավոր կրկնությամբ ոճական անհարթություն է գոյացել, որից հնարավոր է ազատվել. «Նման ուղղվածության և նշանակալի չափերի ծրա-գրերի թվում են, մասնավորապես....»:

❖ «Այլ հոդմակայանների գործարկման **ուղղությամբ** գործուն քայլեր չեն արվում, ուստի՝ այս ծրագրերի իրագործման **ուղղությամբ** Հայաստանում **անհրաժեշտ են ներդնել մի շարք միջոցառումներ**»:

❖ «Արդյունաբերության, հանքագործական արդյունաբերության և գյու-ղատնտեսության **ուղղություններով** կատարված ամենապարզ ուսումնասի-րությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում առկա են տարածական զարգացման հնարավորություններ հենց այդ **ուղղություններով**»:

Այստեղ ևս ոճական անհարթությունը հնարավոր է վերացնել՝

«Այլ հոդմակայանների գործարկման քայլեր չեն արվում, ուստի այս ծրագրերի իրագործման համար Հայաստանում անհրաժեշտ են մի շարք միջոցառումներ»:

«Արդյունաբերության, հանքագործական արդյունաբերության և գյուղա-տնտեսության ամենապարզ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ

հատկապես այդտեղ են ՀՀ տարածական զարգացման հնարավորությունները»:

❖ «Այս ցուցանիշի դիտարկումը կարևոր է հասկանալու համար որքան աղետալի *վիճակում* է մարզի ժողովրդագրական *վիճակը*՝ արտագաղթի և մարգերում առկա տնտեսական *վիճակի* պայմաններում»:

Այստեղ նույնպես ընդգծված բառի կրկնությունը պարտադիր չէ: «Այս ցուցանիշի դիտարկումը կարևոր է՝ հասկանալու համար, թե որքան աղետալի է մարզի ժողովրդագրական *վիճակը*՝ արտագաղթի և մարգերում առկա տնտեսական պայմանների հետևանքով»:

❖ «Մի շարք հետազոտություններ մատնանշում էին, որ այս մոդելի *կիրառումը* զարգացող տնտեսությունների համար *կիրառելի* չէ»:

Պարզապես ազատվենք ավելորդ բառից՝ «Մի շարք հետազոտություններ մատնանշում էին, որ այս մոդելը *կիրառելի* չէ զարգացող տնտեսությունների համար»:

❖ «Ընդ որում Հայաստանից Ռուսաստան արտահանման *ծավալները* 2011 թ. համեմատ ավելացան 26,0%-ով և *կազմեցին* 280 մլն դոլար, որը *կազմում* էր Հայաստանի ամբողջ արտահանման 19,6%-ը: Ռուսական արտադրության ապրանքների ներմուծումը Հայաստան 2012թ. ավելացավ 18,9%-ով և *կազմեց* 1059,1 մլն դոլար: 2012 թ. Հայաստանի արտաքին առևտրի շրջանառության մեջ Ռուսաստանի բաժինը *կազմեց* 23,5%»:

«Կազմել» բայը բազում նշանակություն ունի (ըստ Էդ. Աղայանի՝ տասնհինգ¹¹), այդ թվում՝ մեջբերման կազմում գործածվածները՝ հավաքականություն գոյացնել, մասը լինել և այլն: Բայց մի՞թե անխուսափելի է դրա կուտակումը, մանավանդ՝ սա մասամբ ռուսերենի ազդեցության հետևանք է:

Արդ, կառաջարկեինք փոքր-ինչ բազմազանեցնել մեր բառապաշարը՝ «Ընդ որում, Հայաստանից Ռուսաստան արտահանման ծավալը 2011 թ. համեմատությամբ ավելացավ 26,0%-ով և *դարձավ* 280 մլն դոլար, որը Հայաստանի ամբողջ արտահանման 19,6%-ն էր: Ռուսական արտադրության ապրանքների ներմուծումը Հայաստան 2012 թ. ավելացավ 18,9%-ով և *հասավ* 1059,1 մլն դոլարի: 2012 թ. Հայաստանի արտաքին առևտրի շրջանառության մեջ Ռուսաստանի բաժինը *կազմեց* 23,5%»:

❖ «Ներմայրցամաքային երկրների հիմնական խնդիրները նախ և առաջ *պայմանավորված* են աշխարհագրական անբարենպաստ *պայմաններով*, ինչը միջազգային համագործակցությանը այս երկրների անշահավետ մասնակցության պատճառ է»:

Ձևակերպենք միտքն ավելի ըմբռնելի շարահյուսությամբ՝ «Ներմայրցամաքային երկրների հիմնական խնդիրները, նախևառաջ, հետևանք են աշխարհագրական անբարենպաստ պայմանների, որոնք զրկում են նրանց միջազգային համագործակցությանը շահավետ մասնակցելու հնարավորությունից»:

Ավելորդ բառեր

Հավելադրությունը (ավելադրություն), այսինքն՝ նույնիմաստ կամ մերծիմաստ բառերի անհարկի կրկնությունը հանդիպում է խոսքի բոլոր տեսակներում: Արդարացված կրկնությունը (հավելադրությունը), ինչպես հայտնի է,

¹¹ Տե՛ս Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 667:

ոճական հնարք է՝ բանադարձում (figura), որն ասելիքին հաղորդում է պատկերավորություն, ըստ հեղինակի մտադրության՝ սաստկացնում խոսքի հուզական արտահայտչականությունը¹²։ Սակայն բառերի և արտահայտությունների անտեղի կրկնությամբ խոսքը դառնում է միապաղաղ, ծանրաբեռնված, ոչ գրագետ և անհրապույր։ սա արձանագրված է մանավանդ պաշտոնական գրագրության մեջ¹³։ Իհարկե, թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում հաճախ հարկ է լինում այս կամ այն միտքը կրկնել՝ հասցեատիրոջն առավել հասկանալի դարձնելու համար։ Բայց չպետք է մոռանալ մի պարզ կանոն։ միևնույն միտքը հարկավոր է կրկնել նոր բառերով և արտահայտություններով, ինչը, իր հերթին, ենթադրում է հարուստ բառապաշարի առկայություն։

Ինչպես կհամոզվենք, արդի հայերենում հավելադրությունը երկու պատճառ ունի՝ ռուսերենի չհաղթահարված ազդեցությունը (ժամանակին անհարկի կատարված պատճենային թարգմանություններ, որոնցից մինչ օրս չենք կարողանում ազատվել) և խոսքի տիրոջ լեզվատրամաբանական մշակույթի ցածր մակարդակը։ Նախ դիտարկենք ռուսերենից «տրոյական ծիու» պես հայերենին նվիրած մի քանի լեզվակաղապար, այնուհետև, մասամբ դարձյալ ռուսերենից պատճենված, մասամբ էլ ընդօրին սխալներ։ Իսկ հավելադրությունից ազատվելու ճանապարհը մտքի հայերեն վերաշարադրանքն է։ Այստեղ մեզ զորավիզ է լինելու նաև մեթոդական այն ցուցումը, որ հայտնի է որպես «Օկկամի ածելի» (կամ՝ «խնայողության սկզբունք»¹⁴)։ այս կամ այն միտքը ձևակերպելու համար անտեղի չավելացնել լեզվական իրակություններ, այլ հնարավորինս բավարարվել եղածով։ Իսկ թե ինչ է սա նշանակում՝ պարզ կդառնա, հուսով ենք, ստորև բերված օրինակների վերլուծությունից։

❖ «Երրորդ՝ պետական ծախսերի ձևավորման հիմնական աղբյուր **հանդիսանում** են հարկերը։ Եվ վերջապես չորրորդ՝ հիմնականում պետական ծախսերը **հանդիսանում** են ոչ արտադրական, քանի որ դրանք **հանդիսանում** են ազգային եկամտի մաս, որը դուրս է մնում վերարտադրության գործընթացից»։

Ո՞րն է ասույթի միտքը։ նախ՝ բացատրել, թե պետական ծախսերը ինչ միջոցների շնորհիվ են կատարվում, որն է այդ միջոցների գոյացման աղբյուրը, և ինչ բնույթի են այդ պետական ծախսերը (արտադրական, թե ոչ արտադրական)։ Արդ, եթե միտքը ճիշտ ենք հասկացել, խմբագրենք առանց ընդգծված բառի։

«Երրորդ՝ պետական ծախսերի ձևավորման հիմնական աղբյուրը հարկերն են։ Եվ, վերջապես, չորրորդ՝ պետական ծախսերն իրենց բնույթով հիմնականում ոչ արտադրական են՝ ազգային եկամտի մաս, որը դուրս է մնում վերարտադրության գործընթացից»։

❖ «Քամու էներգիան համարվում է էներգիայի վերականգնվող տեսակ, քանի որ **հանդիսանում** է արեգակի գործունեության հետևանք։ Աշխարհում այսօր այն **հանդիսանում** է արագ զարգացող ճյուղ»։

¹² Տե՛ս Վ. Միրզոյան, Ճարտասանություն, Եր., «ՎՄՎ-Պրինտ», 2012։

¹³ Տե՛ս հանգամանորեն Յու. Ավետիսյան, Պաշտոնական ոճ, Եր., «Զանգակ-97», 2011։

¹⁴ «Օկկամի ածելի» ամենատարբեր ձևակերպումներն ու մեկնաբանումները կան. առավել պարզն ու հասկանալին, թերևս, Ալբերտ Էյնշտեյնի ձևակերպումն է՝ «Ամեն ինչ դարձրեք այնքան պարզ, որքան հնարավոր է, բայց ոչ՝ պարզունակ» (Make everything as simple as possible, but not simpler)։

Վարվենք նույնկերպ՝ «Քամու էներգիան համարվում է էներգիայի վերականգնման տեսակ, քանի որ արեգակի գործունեության հետևանք է: Աշխարհում այսօր այն արագ զարգացող ճյուղ է»:

Մենք հետևողականորեն «արտաքսում» ենք տվյալ բառն այն պարզ պատճառով, որ սա ռուսերենի լեզվամտածողությանը բնորոշ կաղապար է՝ հայերենին խորթ և ոճական անհարթություններ հարուցող: Մեր լեզվում այս կամ այն երևույթի լինելիությունը, գոյությունը, համապատասխանաբար՝ նախադասության կազմում ենթակային հատկանիշ վերագրելը (ստորոգումը) արտահայտվում են էական բայով. օրինակ՝ «Սույն հողվածի հեղինակը Վ. Միրզոյանն է», ոչ թե՝ «Սույն հողվածի հեղինակ է *հանդիսանում* Վ. Միրզոյանը» (Автором данной статьи является В. Мирзоян):

Գրեթե չկա գիտական որևէ հրապարակում, ուր այս «չարաբաստիկ» բառը խցկված չլինի՝ տգեղացնելով և երկարացնելով հայերեն խոսքը: Ահավասիկ մի փոքր փունջ՝ «Ուստի, հիմնական արտադրական կապիտալի աճի բարձր *տեմպերը հանդիսանում* են վճռական գործոն ամբողջ տնտեսության զարգացման համար և բնութագրում է նրա զարգացման մակարդակը»: «Զբոսաշրջությունը *հանդիսանում* է ներտնտեսական գործունեության առավել կայուն աճ ապահովող ոլորտներից մեկը»: «Նյութական արտադրության մնացած ճյուղերը *հանդիսանում* են միայն նյութական ռեսուրսների սպառողները»: «Անկասկած, հասարակական արդյունքի և ազգային եկամտի արտադրության երկու մասերի միջև գիտականորեն հիմնավորված համամասնությունների սահմանում *հանդիսանում* է կարևոր և անհրաժեշտ»: «Թոշակառուների ապրուստը *հանդիսանում* է կարևորագույն սոցիալական խնդիր, որը դիտարկելու համար առաջարկվել է ուսումնասիրել կենսաթոշակի չափը»: «Մրցակցության ապահովումը հիմք կարող է *հանդիսանալ* նորարարական տնտեսության ձևավորման *ճանապարհին*»: «Ըստ ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների՝ էլեկտրաէներգիայի առումով Հայաստանը *հանդիսանում* է ինքնաբավ երկիր»: «Աշխատանքի գնի և մասնավորապես, միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ տվյալները *հանդիսանում* են աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշներից»: «Եղեգնաձոր շրջանի զբոսաշրջային գրավչությունը ներկայացնող հիմնական տարածքներն են *հանդիսանում* 28 բնական, պատմամշակութային և ավանդույթային հուշարձաններ»:

Եթե վերոբերյալ բոլոր օրինակներում խմբագրական թեթևակի միջամտություն է հարկավոր, ապա ստորև բոլոր մեջբերումներում անխտիր այս «մոլախոտից» պարզապես հարկավոր է անվարան ազատվել: Այլ կերպ ասած՝ ռուսերենի պատճենումն այստեղ երկիցս ապօրինի է, քանի որ հայերենով արդեն ասվել է այն, ինչն անհարկի երկրորդվում է օտար լեզվով՝ «Ազգային ստանդարտացումը հիմք է *հանդիսանում* ազգային տեխնիկական օրենսդրության մշակման և տնտեսության մեջ նորարարությունների ու կառավարման լավագույն փորձի ներդրման համար»: «Այլ կերպ ասած՝ ավելի մրցունակ է *հանդիսանում* աճ ապահովելու ավելի մեծ հավանականություն ունեցող տնտեսությունը»: «Ապրանքի մրցունակության և օգտակարության մակարդակի գնահատման համար հիմք է *հանդիսանում* դիտարկվող ժամանակահատվածում կազմակերպության *կողմից* վաճառված ապրանքների միջին թվաքանական գինը»: «Տեխնոլոգիաների կատարելագործման խթանման լրացուցիչ միջոց է *հանդիսանում* արտահանման աճը»:

«Աշխատանքային եկամուտների այսպիսի ցածր մակարդակը վճռական գործոն է *հանդիսանում* մեր երկրում սպառողական պահանջարկի ցածր մակարդակի ձևավորման համար»: «Կարևոր հարց է *հանդիսանում* ՀՀ համախառն ավելացված արժեքի կառուցվածքի մեջ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների տեսակարար կշռի նվազումը վերջին տասը տարիների ընթացքում»: «Հենց այդպիսի տեխնոլոգիաներն են *հանդիսանում* տնտեսական աճն ապահովող գլխավոր շարժիչները»: «Այստեղ հնարավոր վտանգ է *հանդիսանում* ազդեցիկ շահառու խմբերի առկայությունը»:

Կարդում ենք, կրկնում են, առանց «հանդիսանալու». սահուն է, գեղեցիկ և նույնիսկ շնչառության համար՝ օգտակար:

❖ «Այդ տեսության գաղափարը *կայանում է նրանում*, որ ապրանքի արժեքի ստեղծմանը մասնակցում են աշխատանքը, կապիտալը և հողը»: «Ոչ առևտրային մրցակցության առանձնահատկությունը *կայանում է նրանում*, որ ոչ առևտրային ընկերությունները կարող են մրցակցել ինչպես միմյանց հետ, այնպես էլ առևտրային ընկերությունների հետ»: «Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը *կայանում է նրանում*, որ դրանք կարող են հիմք *հանդիսանալ* ՀՀ Կառավարության տեխնոլոգիական զարգացման ռազմավարությունների մշակման համար»: «Նոր տնտեսական աշխարհագրության մոդելի գլխավոր նվաճումը *կայանում է նրանում*, որ այն ցույց է տալիս, թե ինչպես է շուկայի չափը փոխազդում ձեռնարկությունների ներքին տարածական տնտեսության մասշտաբների հետ»: «Դիտարկված միջազգային ինդեքսների առանձնահատկությունը *կայանում էր նրանում*, որ դրանք թույլ են տալիս բացահայտել տեխնոլոգիական զարգացման մեջ առանձին գործոնների կարևորությունը և դերը»:

Այս «կայանում է նրանում» (состоит в том) կաղապարը ևս ռուսերենից ենք «ժառանգել». հայերենում «այն է» ձևն է. «գաղափարն այն է, որ», «առանձնահատկությունն այն է, որ», «նվաճումն այն է, որ», «առանձնահատկությունն այն է, որ» և այլն:

❖ «Վերջինս *իրենից չի ներկայացնում* թվային գնահատական, այլ *հանդիսանում* է ցուցանիշների համակարգ»:

Այստեղ մեկեն երկու «մոլախոտ» կա, որոնցից ազատվում ենք միևնույն՝ արդեն քննարկված միջոցով. «Վերջինս ոչ թե թվային գնահատական, այլ ցուցանիշների համակարգ է»:

«Հետևաբար, կապիտալ ներդրումների արդյունավետությունը պետք է *իրենից ներկայացնի* կապիտալ ներդրումների և գործարկվող տեխնիկայի արժեքի միջև հարաբերությունը»:

«Представляет из себя» ձևը նույնպես կաշուն ռուսաբանություն է՝ բավական տարածված, բայց ազատվել հնարավոր է. «Հետևաբար, կապիտալ ներդրումների արդյունավետությունը պետք է չափվի որպես կապիտալ ներդրումների և գործարկվող տեխնիկայի արժեքի հարաբերություն»:

Նույնկերպ՝ «Սա *իրենից ներկայացնում է* հրատապ հիմնախնդիր» ձևակերպման փոխարեն՝ «Սա հրատապ հիմնախնդիր է»:

Հավելենք ևս մի քանի օրինակ. «Բյուջետային համակարգի էական մասն է *կազմում* բյուջետային գործընթացը, որն *իրենից ներկայացնում է* յուրաքանչյուր տարվա համար բյուջեի կազմումը, Կառավարությունում և պառլամենտում քննարկումները...»: «Ապահովագրական շուկան *իրենից ներկայացնում է* յուրահատուկ տնտեսական հարաբերությունների ամբողջություն,

որոնք ծագում են ապահովագրական ապրանքի և ծառայությունների իրացման հետ»: «Այն **իրենից ներկայացնում** է բաղադրյալ ցուցանիշ»: «Այն նաև **իրենից ներկայացնում է** աշխատատեղերի ստեղծման կարևոր աղբյուր»: «Այս տեսանկյունից, առավել իրատապ է մարդկային կապիտալի տնտեսագիտական հետազոտությունը Հայաստանի պարագայում, քանի որ **այն իրենից ներկայացնում է** անցումային դասական երկիր և սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շուկայական ինստիտուտներն ու գործիքակազմը գտնվում են կայացման փուլում»:

❖ «Հարցվողների ընտանիքի միջին օրական գնումների ծավալը **կազմում** է 6120 դրամ: Ընդ որում՝ նվազագույն գնումը **կազմում** է 1500 դրամ, առավելագույնը՝ 25000 դրամ, մեդիանան՝ 5000 դրամ: Անոմալ պատասխանների թիվը **կազմում** է 7»:

«Կազմել» բայի գործածությանը վերն արդեն անդրադարձել ենք՝ բառապաշարի բազմազանեցման առումով: Այս օրինակում արդեն հարկադրված ենք արձանագրել ռուսերեն «составит» բառի գործածության պատճենումը, որից դուրսին է ազատվել՝ «ծավալը 6120 դրամ է», «գնումը 1500 դրամ է», «Անոմալ (միգուցե՝ շեղվող) պատասխանները յոթն են»:

❖ «Ինչպես ինվեստիցիոն որոշումների ընդունման գործընթացն, այնպես էլ դրանց գնահատման մեթոդները **կազմում** են հիմնական արտադրական կապիտալի վերարտադրության ֆինանսական մեխանիզմի կարևոր բաղադրիչը»:

Այստեղ, փաստորեն, գործ ունենք անհարկի կրկնաբանության հետ (նույն միտքը երկիցս է ասվում), ուստի պիտի շտկվի. կամ՝ «գնահատման մեթոդները **կազմում** են հիմնական արտադրական կապիտալի վերարտադրության ֆինանսական մեխանիզմը», կամ՝ «գնահատման մեթոդները հիմնական արտադրական կապիտալի վերարտադրության ֆինանսական մեխանիզմի կարևոր բաղադրիչն են»:

❖ «Համեմատաբար ավելի մեծ թիվ են **կազմում** այն երկրները, որոնց պառլամենտներն ունեն հարաբերական սահմանափակ իրավասություն»: «Այս շղթան էլ հենց **կազմում** է բյուջետային գործընթացի ողջ էությունը»:

Այս երկու օրինակում արդեն պարզապես ազատվում ենք ռուսերենի ազդեցության հետքից՝ «Համեմատաբար ավելի մեծաթիվ են այն երկրները, որոնց պառլամենտներն ունեն հարաբերական սահմանափակ իրավասություն»: «Այս շղթան էլ հենց բյուջետային գործընթացի ողջ էությունն է»:

❖ «Միջազգային զբոսաշրջությունը լինում է ներգնա և արտագնա: Ներգնա զբոսաշրջությունը **դա** երկրի տարածքում մշտապես չբնակվող անձանց **կողմից** դեպի տվյալ երկրի տարածք կատարվող ճանապարհորդությունն է: Արտագնա զբոսաշրջությունը **դա** տվյալ տարածքում մշտապես ապրող անձանց ճանապարհորդությունն է դեպի մեկ այլ երկիր»: «Հաջորդ գործոնը **դա** գյուղատնտեսությունն է»: «Առաջինը, **դա** գլոբալ տնտեսության առաջացումն ու դիրքերի ամրապնդումն է.... Երրորդը, **դա** ձեռնարկությունների վերափոխումն է.... Առաջինը **դա** պետությունն է»:

Նույնկերպ պիտի վարվենք այս դեպքում. նախադասության ենթակայի երկրորդումը «դա» ցուցական դերանվան ձևով հայերենին միանգամայն խորթ է, հատուկ է ռուսերենին: Օրինակ՝ «Первое – это государство»: Այնպես որ՝ բերված բոլոր նախադասություններում «դա»-երն արտաքսվում են:

❖ «Մինչև *մայիս ամիսը* տնտեսական ակտիվության ցուցանիշը տատանվում էր 7–9%-ի սահմաններում.... Սակայն *հունիս ամսին* այն կտրուկ նվազեց»: «ՀՀ աշխատանքի շուկայում տիրող իրավիճակը բացահայտելու նպատակով 2013 թ. *հոկտեմբեր ամսին* իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն Երևանի մի շարք համայնքներում»: «Հարկավոր է նաև նկատի ունենալ, որ 2013 թ. տվյալները *ներառում են մինչև սեպտեմբեր ամիսը*»:

Ռուսերեն գրականության մեջ հաճախադեպ է ամսվա անվան կողքին «ամիս» բառը հավելելը, թեպետ ռուս ոճաբանները դա հանձնարարելի չեն համարում: Հայերենին այս հավելաբանությունն առավել ևս խորթ է. ուրեմն՝ «մինչև մայիսը տնտեսական....», «հունիսին այն....», «հոկտեմբերին իրականացվել է», «մինչև սեպտեմբերը»:

Այս օրինակով սահմանափակվենք ռուսերենին «մեղադրելուց» (ռուսաց հոյակապ լեզու ինքնին բնավ մեղավոր չէ մեր սեփական կապկական պատճենումների համար), անցնենք հավելադրության երկրորդ տեսակին, որն առնչվում է մեր՝ հեղինակներիս լեզվատրամաբանական մշակույթի ցածր մակարդակին:

Կրկնաբանություն

❖ «ՀՀ-ում տրանսպորտային սակագները *կրկնակի անգամ* գերազանցում են միջազգային միջին գինը»: «....ավելի քան *կրկնակի անգամ* բարձր էր նախորդ տարվա համեմատ»: «Այս ծախսերը, որպես կանոն, *կրկնակի անգամ* գերազանցում են միջազգային պրակտիկայում ձևավորված տրանսպորտային ծախսերի միջին մակարդակը»: «Ուղղակի ներդրումները ավելի քան *կրկնակի անգամ* կրճատվել են»: «....աճելով համարյա *կրկնակի անգամ*»: «....բազմապատիկ *անգամ* արագացնում որոշումների ընդունման գործընթացը»: «....առանձին տարիների *կրկնակի անգամ* գերազանցելով այն»: «....ինչը *եռակի անգամ* ցածր է արդյունաբերության ցուցանիշի համեմատ»: «Պակասուրդային բյուջե ունեցողների *թիվը կրկնապատկվել է ավելի քան 2 անգամ*»:

«Երկու անգամ» նշանակող «կրկնակի» ածականին դարձյալ կրկնություն ցույց տվող «անգամ» մակբայ հավելելը (առդնելը) հանգեցրել է կրկնաբանության (կամ՝ նույնաբանության՝ տավտոլոգիայի) սխալի.¹⁵ միևնույն բանը երկու անգամ է ասվում՝ անհարկի (այսինքն՝ ոչ ոճական նպատակադրմամբ) կրկնվում: Շտկելու երկու ճանապարհ կա. առաջինը՝ ազատվում ենք «անգամ»-ից՝ թողնելով «կրկնակի»-ն. «սակագները կրկնակի գերազանցում էին», «ավելի քան կրկնակի գերազանցում են», «բազմապատիկ արագացնում», «ինչը եռակի ցածր է» և այլն, երկրորդը՝ ազատվում ենք «կրկնակի» բառից և գործածում որոշակի թվականը. «սակագները երկու անգամ գերազանցում էին», «բազում անգամ արագացնում», «ինչը երեք անգամ ցածր է» և այլն:

Վերջին օրինակին այս երկու շտկումները չեն օգնում, քանի որ ասույթը ներքնապես հակասական է՝ չի կարող թիվը և՛ «կրկնապատկվել», և՛ դառնալ «ավելի քան երկու անգամ»: Միգուցե հնարավոր է այսպես՝ «Պակասուրդային բյուջե ունեցողների թիվը մեծացել է ավելի քան 2 անգամ»:

¹⁵ Տե՛ս Գ. Բրուսյան, Տրամաբանության դասընթաց: Դասագիրք բուհերի համար, Եր., Երևանի համալս. հրատ., 1987, 425–427:

❖ «Ծրագիրն *իր մեջ* ընդգրկում է հումքի յուրաքանչյուր տեսակի համար տեղեկություններ»: «Պա է պատճառը, որ երկրների զարգացվածության բոլոր միջազգային ցուցանիշները *իրենց մեջ* ընդգրկում են համապատասխան բաղկացուցիչը»: «...կապիտալահատույցի ցուցանիշը, որն *իր մեջ* միավորում է ինչպես ինվեստիցիաների, այնպես էլ գործող տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը»: «Այն *իր մեջ* ներառում է աշխատակազմի գործունեության նպատակները, խնդիրները և գործառնությունները...»: «Ծրագիրն *իր մեջ* ընդգրկում է ավտոտրանսպորտային արտանետումների կրճատմանն ուղղված, տարբեր բնույթի, մոտ երեք տասնյակ միջոցառումներ»: «Ազգային անվտանգության հայեցակարգն ամբողջական չէր լինի առանց *իր մեջ* ընդգրկելու ազգային մշակույթի պահպանման, վերարտադրության և կատարելագործման միջոցառումների հիմնավորված համակարգը»: «Մյուս կողմից հիմնահարցը *հանդիսանում* է պետական և անձնական հոգածության օբյեկտ միաժամանակ, հաճախ *իր մեջ* պարունակելով սուբյեկտիվ բազմաթիվ մոտեցումներ ու լուծումներ»: «Երկրների տնտեսության մրցունակությունը պայմանավորված է այն ապրանքների և ծառայությունների թողարկումով, որոնք *իրենց մեջ* մրցունակության բաղադրիչներ են պարունակում»:

Բոլոր օրինակներում կրկնաբանություն է գոյացել «իր մեջ» բառակապակցության հետևանքով, որը «ինքը» դերանվան սեռական հոլովի և տեղ ցույց տվող կապի միացությունն է: Ենթակայից անմիջապես հետո դերանունի անհարկի կրկնության մասին վերն արդեն խոսել ենք: «Մեջ» կապի կարիքն էլ չկա, քանի որ համապատասխան բայն արդեն արտահայտում է ներսում գտնվելու, մաս կազմելու, ներառվելու իմաստը՝ «ընդգրկում», «միավորում», «ներառում», «պարունակում»: Արդ, «իր մեջ» բառակապակցությունը լիակատար հիմքով հեռացնում ենք բոլոր օրինակներից:

❖ «Վերջապես, յուրաքանչյուր կլաստերից ընտրվել են *թվով* 20–22 տնային տնտեսություններ, որոնց անդամներից առնվազն մեկը հետազոտության պահին գտնվել է Հայաստանի սահմաններից դուրս»:

Թվականի կողքին «թիվ» գրառելը միանգամայն ավելորդ է՝ հանգեցնում է կրկնաբանության: Կարող ենք առաջարկել՝ «Վերջապես, ամեն մի կլաստերից ընտրվել է 20–22 տնային տնտեսություն, որոնց անդամներից առնվազն մեկը հետազոտության պահին գտնվել է Հայաստանի սահմաններից դուրս»:

❖ «Համայնքները միմյանցից տարբերվում են ոչ միայն *նրանցում բնակվող* բնակչության թվով, այլև համայնքների կարգավիճակով»:

Պարզապես ազատվենք ավելորդ բառերից՝ «Համայնքները միմյանցից տարբերվում են ոչ միայն բնակչության թվով, այլև համայնքների կարգավիճակով»:

❖ «Գրեթե նույն իրավիճակում են *գտնվում* քաղաքային համայնքները»: «Վարչական կենտրոն լինելու գործոնը վճռական դեր է խաղացել ոչ միայն այդ կենտրոնի, այլև նրա ենթակայության *տակ գտնվող* բնակավայրերի զարգացման համար»:

Այստեղ էլ վարվում ենք նույնպես՝ «Գրեթե նույն իրավիճակում են քաղաքային համայնքները»: «Վարչական կենտրոն լինելու գործոնը վճռական դեր է խաղացել ոչ միայն այդ կենտրոնի, այլև դրա ենթակայությամբ բնակավայրերի զարգացման համար»:

«Դա **ակնհայտ երևում** է վերը բերված գրաֆիկներից»:

Երկու բառից մեկն ավելորդ է. «Դա **երևում** է վերը բերված գծապատկերներից», կամ՝ «Դա **ակնհայտ** է վերը բերված գծապատկերներից»:

Անհարկի օտարաբանություն

«Օտարաբանություն» հասկացությամբ բնութագրվում են տվյալ լեզվին խորթ այն բառերը, լեզվական կաղապարները, արտասանության եղանակները, որոնք գործածվում են, թեպետ այդ լեզվում կան դրանց համարժեքները¹⁶: Միևնույն ժամանակ, ընդունված է փոխառությունները համարել լեզվի բառային կազմի հարստացման ուղիներից մեկը: Եվ, իսկապես, ոչ մի լեզու չի կարող զերծ մնալ այլ լեզուների ազդեցությունից: Եթե չունենք նոր երևույթի, առարկայի հայերեն անվանումը, պիտի գործածենք օտարը՝ կամ ժամանակավորապես, մինչև հայերեն տարբերակի ստեղծումը, կամ էլ հիմնավորապես, եթե տվյալ բառը մերվի հայերենի բառազանձին, ենթարկվի հայերենի կանոններին (ինչպես եղել է հնագույն փոխառությունների պարագայում): Սակայն դա չի վերաբերում անհարկի փոխառությանը: «Անհարկի են համարվում այն փոխառությունները, որոնց համանշանակները կան լեզվում, և դրանց պահանջը չի զգացվում: Այդ կարգի բառերը նոր հասկացությունների կրողները չեն, լեզվում առկա բառերի հետ չեն կարող մտնել հոմանշային կապերի մեջ, ընդհանրապես որևէ չափով չեն նպաստում բառապաշարի հարստացմանը և լեզվի կենսագործունեությանը»¹⁷: Մասնագիտական լեզվում բառագործածության այս խստապահանջությունն առավել ևս կարևոր է, քանի որ այստեղ բառերի մի մասը եզրաբանական նշանակություն ունի, այսինքն՝ գործածվում է որոշակի հասկացություն նշանակելու համար: Հետևաբար՝ օտար բառի անհարկի գործածությամբ մենք գիտական շրջանառությունից ակամա արտամղում ենք հայերեն համարժեքը, փոխանակ ճիշտ հակառակ կերպ վարվելու. հայերենի բառակազմական հնարավորությունները գործադրելով՝ ստեղծել (եթե չունենք) նույն հասկացությունը նշանակող հայերեն բառ:

❖ «Անցումային գործընթացները տարբեր երկրներում ունեն բազմաթիվ ընդհանուր միտումներ: Գոյություն ունեն անցումային երկրների խմբեր, որտեղ այդ **տրենդներն** էլ ավելի մոտ են միմյանց»:

Եթե արդեն միանգամայն տեղին գործածվել է օտար «տրենդ» բառի հայերեն ստույգ «միտում» բառը, ի՞նչ կարիք կա երկրորդել օտար բառը: Մանավանդ՝ տեղին կլինեն դերանվան գործածությունը՝ «....Գոյություն ունեն անցումային երկրների խմբեր, որտեղ **դրանք** էլ ավելի մոտ են միմյանց»:

❖ «Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման **տենդենցները** կանխորոշող ամենակարևոր գործոններից է....»:

Այս դեպքում ևս «միտում»-ի գործածությունը միանգամայն տեղին կլինի:

❖ «Նման բնութագրումը կամբողջացներ Ազգային ժողովի հիմնական գործառնությոնը, կնպաստեր **պառլամենտի** և **պառլամենտական** ժողովրդավարության զարգացմանն ու խորացմանը»:

¹⁶ Տե՛ս Լեզվաբանական բառարան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 313:

¹⁷ Ա. Սուքիասյան, ժամանակակից հայոց լեզու, Եր., Երևանի համալս. հրատ., 1982, էջ 244:

Արդեն քսան տարուց ավելի է, ինչ մեզանում վերականգնվել է «խորհրդարան» բառը: Ուստի բացարձակապես հիմնավորված չէ օտար բառին հարություն տալը՝ «Նման բնութագրումն առավել ամբողջական կենութագրեր Ազգային ժողովի հիմնական գործառույթը, կնպաստեր **խորհրդարանի** և **խորհրդարանական** ժողովրդավարության զարգացմանն ու խորացմանը»:

❖ «Ամրապնդելով և **դիվերսիֆիկացնելով** մատակարարման աղբյուրները, մեղմելով ներմուծման առաջարկը.... »:

Այս եզրը նույնպես հայերեն վավերացված համարժեք ունի¹⁸, ուստի դա էլ հարկավոր է գործածել՝ «Ամրապնդելով և **բազմազանեցնելով** մատակարարման աղբյուրները, մեղմելով ներմուծման առաջարկը.... »:

❖ «Տնտեսության կենտրոնացումը թույլ չի տալիս գների անկում, որը կնպաստեր **մասսայական** սպառման աճին....»: «Այսօր արդիական են ոչ թե **մասսայական** աշխատատեղերը, այլ գրավիչ, ստեղծագործ, ժամանակակից քաղաքացուն հարմար անհատական աշխատատեղերը»: «Ժամանակակից քաղաքների զարգացման նոր մոդելները պահանջում են ոչ թե **մասսայական**, այլ ստեղծագործ, ժամանակակից քաղաքացուն հարմար անհատական աշխատատեղեր: Բացի այդ այն ենթադրում է **մասսայական** չափազանց լավատեսական սպասումներ»: «Երիտասարդների շրջանում առկա գործազրկությունը առաջ է բերում ավելի բարդ իրավիճակներ և առհասարակ վտանգվում է ՀՀ ազգային անվտանգությունը, քանզի գործազուրկ երիտասարդները **մասսայաբար** լքում են երկիրը»:

Ընթերցողը դյուրին կշտկի՝ գործածելով հայերեն «զանգվածային» ածականը, իսկ վերջին օրինակում՝ «զանգվածաբար» մակբայը. օտար բառը իմաստային որևէ առավելություն չունի:

❖ «Հայաստանն ունի վերականգնվող էներգետիկայի և, հատկապես, հողմային ու արևաջերմային էներգիայի բավականին մեծ **պոտենցիալ**»: «Սակայն այս ամենով հանդերձ պետք է փաստել, որ իր ունեցած գիտատեխնիկական և ինտելեկտուալ **պոտենցիալը** Երևանը լիարժեք չի իրացնում»: «Ռուսական շուկան ունի մեծ **պոտենցիալ**»:

Այս օտար բառի հայերեն համարժեքը հայտնի է՝ «Հայաստանն ունի վերականգնվող էներգետիկայի և, հատկապես, հողմային ու արևաջերմային էներգիայի բավական մեծ **ներուժ**»: «Սակայն, այս ամենով հանդերձ, պետք է արձանագրել, որ Երևանն իր գիտատեխնիկական և **մտավոր ներուժը** լիարժեք չի իրացնում»:

❖ «Հայաստանին հաջողվեց պահպանել չեզոքությունը Վրաստանում ձգնաժամային իրադրության պայմաններում և **տրանզիտի** հնարավորությունները վրացական նավահանգիստների միջոցով.... Հայկական կողմը Վրաստանի հետ ակտիվ երկխոսության արդյունքում ապահովեց **տրանզիտ** երթևեկություն»:

Այստեղ ևս ունենք հայերենը՝ «Հայաստանին հաջողվեց պահպանել չեզոքությունը Վրաստանում ձգնաժամային իրադրության պայմաններում և **տարանցման** հնարավորությունները վրացական նավահանգիստների միջոցով.... Հայկական կողմը Վրաստանի հետ ակտիվ երկխոսության արդյունքում ապահովեց **տարանցիկ** երթևեկություն....»:

❖ «Ռուսաստանի տնտեսության **ստազնացիոն** երևույթները կարող են հանգեցնել....»: «Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրների տնտեսա-

¹⁸ Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., «9-րդ հրաշալիք», 2006, էջ 253:

կան *ստազնացիան* կարելի է բացատրել անբարենպաստ աշխարհագրությամբ: «Համաշխարհային տնտեսության *ստազնացիայի* վտանգը դեռևս չի չեղոքացվել»:

Տնտեսագիտական այս եզրն ունի հայերեն ստույգ համարժեք¹⁹, որն էլ, կարծում ենք, արժե գործածել՝ «Ռուսաստանի տնտեսության *լճացման* երևույթները կարող են հանգեցնել....»: «Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրների տնտեսական *լճացումը* կարելի է բացատրել անբարենպաստ աշխարհագրությամբ»: «Համաշխարհային տնտեսության *լճացման* վտանգը դեռևս չի չեղոքացվել»:

❖ «*Ելնելով նրանից*, որ տնտեսության որոշ ճյուղերում և ոլորտներում հարկային բեռը *բավականաչափ* ծանր է, և հարկերը կատարում են իրենց ոչ բնորոշ՝ տնտեսավարող սուբյեկտների միջոցների *կոնֆիսկացման* գործառույթ, խիստ անհրաժեշտություն է դառնում ԱԱՀ-ի *դիֆերենցիալ* դրույքաչափի կիրառումը հատկապես այն ճյուղերում և ոլորտներում, որոնք օբյեկտիվ պատճառներով ունեն շահութաբերության ցածր մակարդակ»:

Փորձենք վերաշարադրել հեղինակի միտքը՝ առանց անհարկի օտարաբանության. «Քանի որ տնտեսության որոշ ճյուղերում և ոլորտներում հարկային բեռն այնքան ծանր է, որ հարկերը, փաստորեն, կատարում են իրենց ոչ բնորոշ՝ տնտեսավարող սուբյեկտների միջոցների *բռնագրավման* գործառույթ, անհրաժեշտություն է դառնում ԱԱՀ *տարբերակված* դրույքաչափի կիրառումը՝ մասնավորապես այն ճյուղերում և ոլորտներում, որոնք, օբյեկտիվ պատճառներով, ունեն շահութաբերության ցածր մակարդակ»:

❖ «Սակայն այս օրենքի ընդունումը չի կարող *մեխանիկորեն* հանգեցնել տեղերում նոր գործելակերպի կազմակերպման»:

Ունենք մասամբ հայերենացված «մեքենայաբար» բառը: Բայց տվյալ դեպքում ասույթի իմաստն արտահայտող շատ ավելի տեղին բառ կա՝ «Սակայն այս օրենքի ընդունումը չի կարող *ինքնաբերաբար* հանգեցնել տեղերում նոր գործելակերպի կազմակերպման»:

❖ «Ինչպես բանկային համակարգի ներսում, այնպես էլ ֆինանսական համակարգի մյուս *սեգմենտներում*....»: «....թեև նրանք գործում են տարբեր շուկայական *սեգմենտներում*»:

Հայերենը՝ «Ինչպես բանկային համակարգի ներսում, այնպես էլ ֆինանսական համակարգի մյուս *հատվածներում*....»: «....թեև նրանք գործում են շուկայական տարբեր *հատվածներում*»: Իմաստային որևէ կորուստ ունեցա՞նք՝ բնավ:

❖ «Այս դեպքում առավել արդյունավետ է տարածքների նախնական էկոլոգիական փորձաքննության անցկացումը, ռիսկային գոտիների հայտնաբերումը և տեղերում *մոնիթորինգային ուսումնասիրությունների* իրականացումը»:

Հայերեն «մշտադիտարկում» բառը փոքր-ինչ դժվարությամբ է ձանապարհ հարթում, մինչդեռ դրանով մենք ոչ միայն հայ ընթերցողի համար իմաստի ընկալումն ենք դյուրացնում, այլև բավարարում ենք սեղմության պահանջը. «Այս դեպքում առավել արդյունավետ են տարածքների էկոլոգիական նախնական փորձաքննության անցկացումը, ռիսկային գոտիների հայտնաբերումը և տեղերում *մշտադիտարկումը*»:

¹⁹ Անդ:

❖ «Անհրաժեշտ է նաև **դիֆերենցված** եղանակով կարգավորել արժեթղթերի շուկայում **գործող** սուբյեկտների գործունեությունը՝ արտոնություններ տալով ներդրումային նպատակային գործունեությամբ զբաղվողներին»։ «Աշխատավարձի միջնորդային **դիֆերենցումը** վերջին տարիներին դրական միտումներ է արձանագրել....»։

Այստեղ ևս հայերենը և՛ սեղմություն է ապահովում, և՛ ավելի է պարզեցնում շարադրանքը. «Անհրաժեշտ է նաև **տարբերակված** կարգավորել արժեթղթերի շուկայի սուբյեկտների գործունեությունը....»։ «Վերջին տարիներին աշխատավարձի միջնորդային **տարբերակմանը** բնորոշ է դրական միտումը....»։

Այսպիսով, մենք դիտարկեցինք բառագործածությանն առնչվող մի քանի խնդիր՝ ստույգ իմաստի աղավաղման, անհարկի հոգնակի ձևի գործածության, բառապաշարի աղքատությունից բխող ոճական անհարթության, հավելուրդայնության և անհարկի օտարաբանության դեպքեր։ Հասկանալի է, որ կան խնդրո առարկայի նաև այլ դիտանկյուններ. հոդվածը չէր էլ հավակնում ընդգրկուն-ավարտուն վերլուծության։ Այդուհանդերձ, արված դիտարկումները և շտկման տարբերակները, հուսով ենք, կարող են նպաստել ժամանակակից տնտեսագիտական հրապարակումների լեզվական մատուցման որոշակի բարելավմանը։ Եվ քանի որ սույն հոդվածը եզրափակում է գիտական խոսույթի լեզվատրամաբանական վերլուծությունը (նաև՝ որպես ՀՊՏՀ գիտական դրամաշնորհ), հիշեցնենք հայ մեծ լեզվաբան Գևորգ Ջահուկյանի այն ասույթը, որը նախորդ հոդվածների բնաբանն է եղել՝ «Գրողը պետք է օգնի ընթերցողին»։ Ահավասիկ այս, ինչպես և նախորդ երկու հոդվածները գրվել են սույն պատգամի լույսով. օգնել մեր հեղինակներին՝ ավելի պարզ ու հասկանալի մատուցելու սեփական մտքերը։

ВАЛЕРИЙ МИРЗОЯН

Профессор кафедры „Менеджмента” АГЭУ,
доктор философских наук

Некоторые проблемы словоупотребления в современных экономических публикациях. - Бесспорна важность как отдельного слова, так и различных словесных конструкций для возможно полной передачи адресату смысла высказывания (интенции) автора определенного языкового сообщения (печатного, электронного, устного). В статье на примере анализа научных публикаций по экономическим проблемам рассматриваются некоторые случаи искажения смысла текста из-за нарушения основного императива словоупотребления – „верное слово на верном месте”. В частности, это касается неправильного толкования терминов, стилистически неоправданного повторения одних и тех же слов как результат скудности словарного состава, избыточности слов и словосочетаний при передаче смысла высказывания, тавтологических искажений, необоснованного использования иноязычных терминов и выражений, когда в научном обиходе существуют их эквиваленты на армянском языке. По каждому анализируемому примеру в статье предлагаются варианты исправления, с единственной целью возможно более точной передачи смысла авторских текстов.

VALERI MIRZOYAN

Professor at the Chair of „Management” at ASUE,
Doctor in Philosophy

Some Problems of Word – Using in Publications on Economics. - There is no doubt about the importance of both a single word and different language constructions for maximally identical formulation of the author's intention and its maximally complete transference to the receiver of communication (written, electronic, oral). This article focuses on some problems of word-using in scientific publications because of violation of main imperative – «the right word in the right place». Particularly, it concerns the cases of false interpretation of terms unjustified (from stylistic point of view) repetitions of the same words because of vocabulary poverty; superfluousness of words and combinations of words during the transference of the meaning from the author to the receiver; tautological distortions; groundless using of foreign languages terms, when there are Armenian equivalents in the scientific circulation. Some suggestions for the suitable correction of the analysed examples, were also made.